ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«20» Հոկտեմբեր 2012թ. N 16

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.15 կետի թ/ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2012թվականի աշխատանքային ծրագիրը՝ մարզի տարածքում գործող «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության մասնաճյուղերի և տասը ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների կատարման ընթացքը համակարգելու, ոռոգման ցանցերի մաքրման և վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքը և համակարգի արդյունավետ շահագործումը կարգավորելու նպատակով՝

Կարգադրում եմ՝

Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

1. Հանձնաժողովին /Դ. Սամսոնյան/՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել ,,Ջրառ,, փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնաճյուղերի մասնագետներին, ջրօգտագործողների ընկերությունների գործադիր տնօրեններին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:
2. Հանձնաժողովին /Դ. Սամսոնյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 20-օրյա ժամկետում և արդյունքների վերաբերյալ պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին /Դ, Սամսոնյան/ ստուգայցերի և ուսումնասիրությունների ժամանակ թերություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում հարցը քննարկել ջրօգտագործողների ընկերությունների վարչական խորհրդի նիստում, ձեռնարկել գործնական միջոցներ հարցի կարգավորման ուղղությամբ:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ – տնտեսական զարգացման վարչությանը /Վ. Մկրտչյան/ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2012 թվականի մարտի 26-ի
N 76 կարգադրության

ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝
Դ.Սամսոնյան — Հայաստանի հանրապետության Արմավիրի Մարզպետի տեղակալ

Անդամներ՝

Ա.Այվազյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Վ. Աբրահամյան — - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ

Մ. Սարիբեկյան — - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ